



Կապիտալ  
ասեթ  
մենեջմենթ

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ**  
Ֆինանսական հաշվետվություններ և  
Անկախ աուդիտորի եզրակացություն  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Մարտ 2021թ.  
Երևան

**Բովանդակություն**

- 3 Ղեկավարության հայտարարությունը ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման պատասխանատվության վերաբերյալ
- 4 Անկախ աուդիտորի եզրակացություն
- 6 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
- 7 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
- 8 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
- 9 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
- 10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
- 11 Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ

---

Կազմակերպական-իրավական ձևը՝

Փակ բաժնետիրական ընկերություն

Հիմնական գործունեության նկարագիրը՝

Ֆոնդերի կառավարում

Գլխավոր գործադիր տնօրեն՝

Ալիկ Առաքելյան

**Ղեկավարության հայտարարությունը 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման պատասխանատվության վերաբերյալ**

*«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ղեկավարության հայտարարությունը*

Մենք պատասխանատու ենք Ընկերության ֆինանսական վիճակն արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար:

Այսպիսով Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է՝

- հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,
- հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,
- ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների պահպանման, իսկ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներից շեղումների դեպքում՝ ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում այդ շեղումների բացահայտման համար,
- հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,
- ֆինանսական հաշվետվություններն Ընկերության գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար:

Ընկերությունում գործում է ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգ:

Ընկերությունում ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ: Հավաստիացնում ենք նաև, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

*Ֆինանսական հաշվետվությունները (հաստատվել են «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ ղեկավարության կողմից 2021թ. մարտի 30-ին, ստորագրությամբ*

---

Ալիկ Առաքելյան

Գլխավոր գործադիր տնօրեն

---

Գայանե Վարդանյան

Գլխավոր հաշվապահ

«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ Մասնակցին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը :

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ) :

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրեցրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄԽ կանոնագիրք), և պահպանել ենք ՀՄԷՄԽ կանոններով նախատեսված էթիկայի այլ պահանջները: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքը հիմնավորելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ ունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար


Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խարդախության կամ սխալի արդյունքում առաջացող խեղաթյուրումները համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա: ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք սխալի կամ խարդախության հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքը հիմնավորելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն ղեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Մակայն ապագա ղեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց՝ ի թիվս այլ հարցերի տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

30 մարտի, 2021թ.  
«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ



Վահագն Սահակյան, FCCA  
Տնօրեն  
Գնել Խաչատրյան, FCCA  
Աուդիտի ղեկավար

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ**

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

	<b>Ծան.</b>	<b>2020թ. հազ. դրամ</b>	<b>2019թ. հազ. դրամ</b>
Ֆոնդերի կառավարման վճարներ	5	36,787	58,932
Շահույթի կամ վնասի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից գուտ օգուտ		19,668	42,074
Կոմիսիոն եկամուտ		307	2,042
Կոմիսիոն ծախսեր		(186)	(110)
Ընդհանուր գործառնական ծախսեր	6	<u>(48,364)</u>	<u>(35,899)</u>
<b>Շահույթ մինչև հարկումը</b>		<b>8,212</b>	<b>67,039</b>
Շահութահարկի գծով փոխհատուցում	7	114	712
<b>Շահույթ հարկումից հետո</b>		<b><u>8,326</u></b>	<b><u>67,751</u></b>
Այլ համապարփակ եկամուտ		-	-
<b>Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b><u>8,326</u></b>	<b><u>67,751</u></b>

*Ֆինանսական հաշվետվությունները (էջ 6-26) հաստատվել են «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ ղեկավարության կողմից 2021թ. մարտի 30-ին, ստորագրությամբ՝*

Ալիկ Առաքելյան  
Գլխավոր գործադիր տնօրեն

Գայանե Վարդանյան  
Գլխավոր հաշվապահ  
«Էյ Էն Աուդիտ» ՓԲԸ լիազոր ներկայացուցիչ

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ**

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն  
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

	Ծան.	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
<b>Ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		114	1,111
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	8	273,516	266,283
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ		2,003	3,921
Հետաձգված հարկային ակտիվներ	9	5,798	5,684
Այլ ակտիվներ	10	2,661	20,360
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>284,092</b>	<b>297,359</b>
<b>Պարտավորություններ</b>			
Այլ պարտավորություններ	11	29,872	9,465
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>29,872</b>	<b>9,465</b>
<b>Սեփական կապիտալ</b>			
Կանոնադրական կապիտալ	12	207,900	207,900
Գլխավոր պահուստ	12	20,000	10,000
Զբաղիված շահույթ		26,320	69,994
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>254,220</b>	<b>287,894</b>
<b>Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ</b>		<b>284,092</b>	<b>297,359</b>

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ**

**Դրամական հոսքերի մասին հաշվետվություն  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Ֆոնդերի կառավարման վճարների ստացում	54,832	43,680
Վճարված կոմիսիոն գումարներ	(186)	(110)
Ստացված կոմիսիոն եկամուտներ	307	2,001
Արտարժույթի առք ու վաճառքից օգուտ	21	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ձեռքբերում	(85,615)	(12,500)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	98,210	14,577
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(26,179)	(14,896)
Վճարված կանխավճարներ և գործառնական ծախսեր	(21,305)	(15,108)
<b>Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսք</b>	<b>20,085</b>	<b>17,644</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	-	(3,614)
Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների օտարումից մուտքեր	-	1,984
<b>Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսք</b>	<b>-</b>	<b>(1,630)</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>		
Վճարված շահաբաժիններ	(20,900)	(14,910)
<b>Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսք</b>	<b>(20,900)</b>	<b>(14,910)</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ (նվազում)</b>	<b>(815)</b>	<b>1,104</b>
<b>Դրամական միջոցների մնացորդներ տարվա սկզբում</b>	<b>1,111</b>	<b>7</b>
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(182)	-
<b>Դրամական միջոցների մնացորդներ տարվա վերջում</b>	<b>114</b>	<b>1,111</b>



**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ**

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

	<u>Կանոնա- դրական կապիտալ</u>	<u>Գլխավոր պահուստ</u>	<u>Զբախշված շահույթ</u>	<u>Ընդամենը</u>
<b>2020թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>207,900</b>	<b>10,000</b>	<b>69,994</b>	<b>287,894</b>
<b>Տարվա համապարփակ եկամուտ</b>				
Տարվա շահույթ	-	-	8,326	8,326
<b>Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>8,326</b>	<b>8,326</b>
<b>Բաշխումներ սեփականատերերին և ներդրումներ նրանց կողմից</b>				
Շահաբաժին	-	-	(42,000)	(42,000)
Մասհանումներ գլխավոր պահուստին	-	10,000	(10,000)	-
<b>Ընդամենը բաշխումներ սեփականատերերին և ներդրումներ նրանց կողմից</b>		<b>10,000</b>	<b>(52,000)</b>	<b>(42,000)</b>
<b>2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>207,900</b>	<b>20,000</b>	<b>26,320</b>	<b>254,220</b>
	<u>Կանոնադր ական կապիտալ</u>	<u>Գլխավոր պահուստ</u>	<u>Զբախշված շահույթ</u>	<u>Ընդամենը</u>
<b>2019թ. հունվարի 1-ի դրությամբ</b>	<b>207,900</b>	<b>4,000</b>	<b>23,153</b>	<b>235,053</b>
<b>Տարվա համապարփակ եկամուտ</b>				
Տարվա շահույթ	-	-	67,751	67,751
<b>Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>67,751</b>	<b>67,751</b>
<b>Բաշխումներ սեփականատերերին և ներդրումներ նրանց կողմից</b>				
Շահաբաժին	-	-	(14,910)	(14,910)
Մասհանումներ գլխավոր պահուստին	-	6,000	(6,000)	-
<b>Ընդամենը բաշխումներ սեփականատերերին և ներդրումներ նրանց կողմից</b>		<b>6,000</b>	<b>(20,910)</b>	<b>(14,910)</b>
<b>2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>207,900</b>	<b>10,000</b>	<b>69,994</b>	<b>287,894</b>

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

---

**Բովանդակություն**

1.	Ընկերության վերաբերյալ .....	11
2.	Պատրաստման հիմունքներ.....	12
3.	Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ.....	13
4.	Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում .....	14
5.	Ֆոնդերի կառավարման վճարներ.....	18
6.	Ընդհանուր գործառնական ծախսեր .....	18
7.	Շահութահարկ.....	19
8.	Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ.....	19
9.	Հետաձգված հարկային ակտիվներ.....	19
10.	Այլ ակտիվներ.....	20
11.	Այլ պարտավորություններ.....	20
12.	Բաժնետիրական կապիտալ և պահուստներ.....	21
13.	Գործարքներ կապակցված կողմերի հետ.....	21
14.	Պայմանական պարտավորություններ .....	21
15.	Հաշվապահական հաշվառման քաղաքականություն.....	22
	Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ .....	27

Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

**1. Ընկերության վերաբերյալ**

«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) գրանցված ներդրումային և կենսաթոշակային ֆոնդերի կառավարում իրականացնող առաջին ընկերությունն է: Ընկերության հիմնադրման ամսաթիվն է՝ 2012 թ. հոկտեմբերի 18-ը. այն գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից, որպես ներդրումային ֆոնդերի կառավարիչ՝ ստանալով թիվ 1 լիցենզիան: Ընկերության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Արգիշտի փողոց, 7 շենք, 1-ին հարկ, գրասենյակ 101: Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Ընկերությունը ղեկավարում և իրականացնում է ֆոնդերում պահվող փայերի վարչարարությունը: Այդ կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները չեն ներառվել սույն ֆինանսական հաշվետվություններում: Ընկերության բոլոր ակտիվները և պարտավորությունները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում: Ընկերության իրավաբանական հասցեն է Հայաստանի Հանրապետություն, Երևան, Արգիշտի 7 շենք:

Կազմակերպության միակ մասնակիցն է Տիգրան Կարապետյանը:

Ընկերությունը կառավարում է հետևյալ բաց կամավոր կենսաթոշակային և ներդրումային ֆոնդերը՝

- ԿԱՄ պետական արժեթղթերի ներդրումային ֆոնդ
- ԿԱՄավոր 1 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ
- ԿԱՄավոր 2 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ
- ԿԱՄ Բրիդջ Ֆոնդ I
- ԿԱՄ Բրիդջ Ֆոնդ II

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա տվյալներով կազմել է 7 մարդ (2019թ.՝ 8 մարդ):

**Գործարար միջավայր**

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գնահատականն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Նոր տիպի կորոնավիրուսի (COVID-19) լայն աշխարհագրական տարածումը հաշվեկշռային ժամանակահատվածում և դրա ներխուժումը ՀՀ տարածք, ինչպես նաև Հայաստանի ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից մինչև ապրիլի 14-ը արտակարգ դրություն սահմանելու մասին ՀՀ Կառավարության որոշումը զգալի ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա: Համավարակի կանխարգելմանն ուղղված միջոցումների անցկացման՝ այդ թվում ճանապարհորդության արգելման, կարանտինի, ոչ հիմնական ծառայությունների մատուցման ժամանակավոր արգելման հետևանքով բազմաթիվ ընկերություններ և անհատներ հարկադրված են

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

եղել երկարաժամկետ կամ անորոշ ժամանակահատվածով սահմանափակել կամ դադարեցնել իրենց գործունեությունը, ինչի հետևանքով ՀՀ Կառավարությունը ձեռնարկել է տնտեսական միջոցառումների ծրագրեր՝ համավարակի տնտեսական ազդեցության չեզոքացման նպատակով: Համաճարակի հետագա տևողությունը և ազդեցությունը, ինչպես նաև հիմնախնդրի հաթահարմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը այս պահին շարունակում են մնալ անորոշ:

Ի լրումն, 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմն ընդդեմ Արցախի հանրապետության ստեղծել է քաղաքական և տնտեսական ճգնաժամերի էական նախադրյալներ, որը որպես հետևանք առաջացրել է դրամի նկատմամբ դոլարի փոխարժեքի արժևորման ներդրողների ընդհանուր տրամադրվածության նվազման և ֆինանսական շուկաներում անորոշությունների և տատանումների ավելացման:

Այսպիսի գործառնական միջավայրն էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Ընկերության գործունեության կայունությունն ապահովելու նպատակով, այդուհանդերձ ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից՝ Ղեկավարությունը հնարավորություն չունի արժանահավատ գնահատական տալ, թե նման հանգամանքները ինչ ազդեցություն կունենան Ընկերության հետագա տարիների ֆինանսական վիճակի վրա:

**2. Պատրաստման հիմունքներ**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՄ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՄ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 15-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման դրույթները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

***Չափման հիմքերը***

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա՝ բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

***Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ***

*ա. 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ:*

Առկա չեն նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել 01.01.2020թ.-ից հետո, և որոնք ունեցել են նշանակալի ազդեցություն ՇՆԿ-ի հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

*բ. Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՄ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ*

Առկա չեն հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած նոր ստանդարտները, մեկնաբանությունները և փոփոխությունները, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան էական ազդեցություն ՇՆԿ-ի հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

**3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ**

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

***Իրական արժեքի չափում***

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*
- *Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
- *Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

Ընկերությունը մի շարք ակտիվներ չափում է իրական արժեքով (Ծան.8)

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

**4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում**

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել ֆինանսական գործիքներին վերաբերող հետևյալ ռիսկերին՝

- Վարկային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ,
- Իրացվելիության ռիսկ
- Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին:

Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

**(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ**

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ
- Առևտրային դեբիտորական պարտքեր
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Առևտրային կրեդիտորական պարտքեր:

**(բ) Ֆինանսական գործիքներ ըստ կատեգորիաների**

**Ֆինանսական ակտիվներ**

	Իրական արժեքով չափվող		Ամորտիզացված արժեքով չափվող	
	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	114	1,111
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	273,516	266,283	-	-
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	-	2,139	20,184
<b>Ընդամենը</b>	<b>273,516</b>	<b>266,283</b>	<b>2,253</b>	<b>21,295</b>
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>				
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	-	719	651
<b>Ընդամենը</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>719</b>	<b>651</b>

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

**(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ**

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, դեբիտորական պարտքերը և այլ կրեդիտորական պարտքերը:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների, դեբիտորական պարտքերի և այլ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասարվում է իրական արժեքին դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

**(դ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ**

Ֆինանսական գործիքների իրական արժեքի հիերարխիան ներկայացված է ստորև.

<b>31 դեկտեմբերի</b>	<b>Մակարդակ 2</b>	
	<b>2020թ. հազ. դրամ</b>	<b>2019թ. հազ. դրամ</b>
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	273,516	266,283
	<b>273,516</b>	<b>266,283</b>

Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների հետ կապված նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Հաշվետու ժամանակաշրջանում մակարդակների փոփոխություններ չեն եղել: Գնահատման մեթոդները և նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալները, որոնք օգտագործվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը սահմանելիս, ինչպես նաև առաջնային ոչ դիտելի ելակետային տվյալների և իրական արժեքի փոխհարաբերությունները ներկայացված են ստորև.

<b>Ֆինանսական գործիք</b>	<b>Գնահատման մեթոդ</b>
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	Փայերի իրական արժեքը չափվում է որպես ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը՝ հաշվետու ամսաթվի դրությամբ

Հաշվետու ժամանակաշրջանում իրական արժեքը չափելու համար օգտագործված գնահատման մեթոդում փոփոխություն չի եղել:

**Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ**

Ղեկավարությունն ընդհանուր պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման, նպատակների և քաղաքականության համար: Ղեկավարությունն ամսական կտրվածքով հաշվետվություններ է ստանում Ընկերության գլխավոր հաշվապահից՝ այսպիսով ստուգելով գործընթացների արդյունավետությունը և սահմանված նպատակների և քաղաքականության պատշաճությունը:

Ղեկավարության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով Ընկերության մրցունակության և ճկունության վրա: Սույն քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

***Պարտքային ռիսկ***

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերությունը կրում է վարկային ռիսկ առաջին հերթին ներդրումային գործունեության և բանկերում մնացորդների գծով: Ընկերությունը փորձում է կառավարել իր պարտքային ռիսկը՝ կիրառելով վերահսկվող ներդրումային ռազմավարություն, ինչպես նաև կիրառելով ողջամիտ դատողություն բանկային գործընկերներ ընտրելիս: Ընկերությունը կնքում է վաճառքի և հետգնման պայմանագրեր: Ապահովված գործարքների գծով, որոնք ներառում են հետգնման և վերավաճառքի պայմանագրեր, Ընկերությանը թույլ է տրվում վաճառել կամ վերագրավադրել որպես գրավ պահվող արժեթղթերը և օգտագործել այս արժեթղթերը դրանց փոխառության գործարքներում, կամ փոխանցել պայմանագրային կողմերին՝ կարճ դիրքերի փակման նպատակով:

Ընկերությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային պարտավորվածությունների համար) կառավարելու համար:

Ընկերության պարտքային ռիսկի առավելագույն մակարդակը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում և չճանաչված պայմանագրային պարտավորվածություններում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ պարտքային ռիսկի նվազեցման վրա:

Ստորև ներկայացված է պարտքային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության չափը հաշվետու ամսաթվի դրությամբ.

	<b>2020թ. հազ. դրամ</b>	<b>2019թ. հազ. դրամ</b>
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	114	1,111
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	273,516	266,283
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,139	20,184
	<b>275,769</b>	<b>287,578</b>

***Դրամական միջոցներ բանկում***

Ընկերությունը գտնում է, որ դրամական միջոցների կորստի ռիսկը կարելի է համարել աննշան՝ քանի որ Ընկերության կողմից միջոցների տեղաբաշխման համար ընտրված ֆինանսական հաստատությունները վստահելի են և հեղինակավոր:

Զգալի դրամական միջոցներ պահվում են հետևյալ հաստատություններում.

	<b>2020թ. հազ. դրամ</b>	<b>2019թ. հազ. դրամ</b>
Բանկ 1	2	1,065
Բանկ 2	112	46
	<b>114</b>	<b>1,111</b>



Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)

**Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող սեփական միջոցների կառավարումից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Կանխիկի դիրքի և դրամական հոսքերի վրա ազդող գործոնները ներառում են արժեթղթերով ներդրումային գործունեությունը, փայերի բաժանորդագրման և մարման տեմպերը: Այս գործոնների համակցությունը կարող է առաջացնել էական տատանումներ որոշակի ժամկետներում կանխիկի դիրքի գծով:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի ողջամիտ ժամկետում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

Մինչև 3 ամիս	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հազ. դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	719	651

**Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ**

Ընկերությունը բնորոշ է ֆինանսական գործիքների պորտֆելի իրական արժեքի կամ եկամտի/ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկը շուկայական տոկոսադրույքների տատանման արդյունքում: Ընկերության տոկոսակիր ֆինանսական գործիքների գծով Ընկերության քաղաքականությունն է՝ գործարքներ կատարել այնպիսի մարման ժամկետ ունեցող ֆինանսական գործիքներով, որոնք լավագույնս համապատասխանում են ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետներին: Այնուամենայնիվ, տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը կարող է բարձր լինել՝ շուկայում գերիշխող տոկոսադրույքների տատանումների արդյունքում:

**Արտարժույթի ռիսկ**

Արտարժույթի ռիսկն առաջանում է այն ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով, որոնք Ընկերության գործառնական արժույթով չեն պահվում: Ընկերությունն ունի սահմանված քաղաքականություն՝ Ընկերության վրա արտարժույթի ռիսկի ազդեցությունը կառավարելու համար՝ Ֆոնդի կանոններում սահմանված արտարժույթի դիվերսիֆիկացման պայմանների համաձայն: Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության վրա արտարժույթի ռիսկի ազդեցությունը պայմանավորված է ԱՄՆ դոլարով գնանշված կորպորատիվ արժեթղթերով, որոնք առկա են ներդրումային պորտֆելում:

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ**

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	<b>31.12.2020թ.</b>	<b>31.12.2019թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
<b>Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</b>		
ԱՄՆ դոլար	162,970	129,757
<b>Զուտ ակտիվային դիրք</b>	<b>162,970</b>	<b>129,757</b>

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորման ազդեցությունը ԱՄՆ դոլարով արտահայտված ֆինանսական գործիքների վրա (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցնէր տարվա շահույթի (հարկումից հետո) և զուտ ակտիվների 16,297 հազար դրամով (2019թ.՝ 12,975 հազար դրամով) ավելացման, իսկ 10% արժեզրկման ազդեցությունը՝ տարվա շահույթի (հարկումից հետո) և զուտ ակտիվների նվազման՝ նույն գումարների չափով:

**5. Ֆոնդերի կառավարման վճարներ**

	<b>2020</b>	<b>2019</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Ներդրումային ֆոնդի կառավարման պարգևավճար	33,681	56,255
Կենսաթոշակային ֆոնդի կառավարման պարգևավճար	3,106	2,677
	<b>36,787</b>	<b>58,932</b>

Ընկերությունը ֆոնդերի կառավարման ծառայություններից հասույթը ճանաչվում է օրական հաշվարկված համապատասխան ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ:

Ընկերությունը կառավարման ծառայություններից հասույթի հավաքագրումը սովորաբար կատարում է հաջորդող ամսվա ընթացքում:

**6. Ընդհանուր գործառնական ծախսեր**

	<b>2020թ.</b>	<b>2019թ.</b>
	<b>հազ. դրամ</b>	<b>հազ. դրամ</b>
Անձնակազմի գծով ծախսեր	26,018	16,138
Առուղիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	6,600	7,200
Կարճաժամկետ վարձակալության գծով ծախսեր	5,640	6,201
Սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	3,856	3,050
Մաշվածության և ամորտիզացիայի գծով ծախսեր	1,918	1,494
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	816	928
Այլ	3,516	888
	<b>48,364</b>	<b>35,899</b>

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ**

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

**7. Շահութահարկ**

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Հետաձգված հարկի գծով եկամուտ	114	712
<b>Ընդամենը շահութահարկի գծով օգուտ</b>	<b>114</b>	<b>712</b>

Տարվա փաստացի հարկային ծախսերի և Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի սահմանված դրույքի միջև տարբերության պատճառները ներկայացված են ստորև.

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Շահույթ նախքան հարկումը	8,212	67,039
Շահութահարկ՝ հաշվարկված սահմանված շահութահարկի դրույքաչափով 18.0% (2019թ.՝ 20.0%)	1,478	13,408
Հարկային նպատակով չհարկվող եկամուտ, գուտ	(3,229)	(8,415)
Նախորդ տարիներից հարկային վնասի օգտագործում	1,637	(4,972)
Նախկինում չճանաչված հարկային կորուստների օգտագործում	-	(433)
Հետաձգված հարկային ակտիվ հարկային վնասից	-	(459)
Հետաձգված հարկային ակտիվի պակասեցում շահութահարկի դրույք փոփոխությունից*	-	159
<b>Ընդամենը հարկային օգուտ</b>	<b>(114)</b>	<b>(712)</b>

**8. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ**

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Փայեր Ընկերության կողմից կառավարվող ֆոնդերում	273,516	266,283
	<b>273,516</b>	<b>266,283</b>

**9. Հետաձգված հարկային ակտիվներ**

Հետաձգված հարկը ժամանակավոր տարբերությունների մասով հաշվարկվում է ամբողջությամբ ըստ պարտավորությունների մեթոդի՝ 18% հարկադրույքի կիրառմամբ (2019թ. դրությամբ՝ 18%): Հետաձգված հարկային ակտիվների շարժը ներկայացված է ստորև.

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Մնացորդ առ 1-ը հունվարի	5,684	4,972
Շահույթում կամ վնասում ճանաչված հարկային ծախսեր	114	712
<b>Մնացորդ առ 31-ը դեկտեմբերի</b>	<b>5,798</b>	<b>5,684</b>

2020թ. դեկտեմբերի 31թ.-ի դրությամբ հարկային վնասների գծով չճանաչված հետաձգված հարկային

**“Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ**

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

ակտիվները կազմել են 19,567 հազար դրամ: Հարկային վնասների գծով ճանաչված հարկային ակտիվները ենթակա են մարման 2022-2025թ. ընթացքում:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների շարժը (նախքան ՀՀՄՍ 12-ով թույլատրելի մնացորդների հաշվանցում կատարելը):

	Մնացորդն առ 31.12.19 դրությամբ հազ. դրամ	2020թ. շահույթում կամ վնասում ճանաչված հազ. դրամ	Մնացորդն առ 31.12.20 դրությամբ հազ. դրամ
Ստեղծված պահուստների գծով	1,499	49	1,548
Հիմնական միջոցների գծով	(62)	36	(26)
Հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնաս	4,247	29	4,276
	<b>5,684</b>	<b>114</b>	<b>5,798</b>

	Մնացորդն առ 31.12.18 դրությամբ հազ. դրամ	2019թ. շահույթում կամ վնասում ճանաչված հազ. դրամ	Մնացորդն առ 31.12.19 դրությամբ հազ. դրամ
Ստեղծված պահուստների գծով	1,157	342	1,499
Հիմնական միջոցների գծով	27	(89)	(62)
Հաջորդ ժամանակաշրջան տեղափոխվող հարկային վնաս	3,788	459	4,247
	<b>4,972</b>	<b>712</b>	<b>5,684</b>

**10. Այլ ակտիվներ**

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Ֆոնդերից ստացման ենթակա միջոցներ	2,139	20,184
Այլ	522	176
	<b>2,661</b>	<b>20,360</b>

**11. Այլ պարտավորություններ**

	2020 հազ. դրամ	2019 հազ. դրամ
Պարտավորություններ չօգտագործված արձակուրդի գծով	5,600	4,728
Պարտավորություններ աուդիտի գծով	3,000	3,600
Այլ կրեդիտորական պարտավորություններ	21,272	1,137
	<b>29,872</b>	<b>9,465</b>

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

**12. Բաժնետիրական կապիտալ և պահուստներ**

Թողարկված կապիտալ

Հայտարարված, թողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 21,000 սովորական բաժնետոմսից (2019թ-ին՝ 21,000): 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բաժնետոմսի անվանական արժեքը կազմել է 9,900 դրամ (2019թ-ին՝ 9,900 դրամ):

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի քանակը կազմում է 30,000 հատ բաժնետոմս:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

Շահաբաժիններ

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Կազմակերպության առավելագույն չբաշխված շահույթի չափով:

2020թ. ընթացքում Ընկերությունը հայտարարգրել և վճարել է 42,000 հազար ՀՀ դրամ շահաբաժիններ (2019թ. ընթացքում 14,910 հազ դրամ) :

**13. Գործարքներ կապակցված կողմերի հետ**

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ընկերության վերջնական վերահսկողություն իրականացնող է պրն. Տիգրան Կարապետյանը (100% բաժնետեր): Փոխկապակցված կողմերի հետ գործարքները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են.

**Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ**

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Ընկերության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար: Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրության հետ կապված ծախսումները ներկայացվում են ստորև:

	2020թ. հազ. դրամ	2019թ. հազ. դրամ
Աշխատավարձ, այլ հատուցումներ	<u>10,093</u>	<u>8,400</u>

**14. Պայմանական պարտավորություններ**

Ընկերությունը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չի ունեցել կապիտալ ներդրումների գծով պարտավորություններ (ինչպես նաև՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ):

Ընկերությունը որևէ կողմի պարտավորությունների համար երաշխավորություն չի տրամադրել 31.12.2020թ. դրությամբ (նույնը 31.12.2019թ. դրությամբ):

Ընկերության հանդեպ հարուցված դատական հայցերը 31.12.2020թ. դրությամբ չկան (նույնը 31.12.2019թ. դրությամբ):

## 15. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### *Հիմնական գործունեությունից եկամուտ*

Կառավարման ծառայություններից հասույթը ճանաչվում է օրական հաշվարկված համապատասխան ֆոնդերի գուտ ակտիվների արժեքի նկատմամբ: Կառավարման վճարները ճանաչվում են՝ հիմք ընդունելով կիրառելի ծառայությունների մատուցման պայմանագրերը, որպես կանոն ժամանակային համամասնությամբ: Ակտիվների կառավարման վճարները՝ կապված ներդրումների հետ հաշվառվում են համամասնորեն՝ ծառայության մատուցման ժամանակահատվածի ընթացքում:

Ակտիվների կառավարման և վարչարարության վճարները վերաբերվում են ֆիդուցիար գործունեության վճարներին, որոնց դեպքում Ընկերությունը պահում կամ իր հաճախորդների անունից ներդնում է ակտիվներ, և մատուցում է ակտիվների վրա հիմնված այլ ֆինանսական ծառայություններ: Այդ վճարները հիմնված են այդ ֆոնդերում ներդրված հաճախորդի ակտիվների օրական մնացորդների վրա: Ընկերությունում ներառված՝ հաճախորդի ակտիվների իրական արժեքները հիմնված են շուկայում գնանշված արժեքների և այլ դիտարկելի շուկայական տվյալների վրա:

### *Արտարժույթային գործարքներ*

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժույթային հոդվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես գուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող գուտ օգուտի կամ վնասի տարր:

### *Տոկոսային եկամուտը և ծախս*

Տոկոսային եկամուտը և ծախսը՝ ներառյալ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

### *Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ*

Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Շահաբաժինների տեսքով եկամուտը հաշվառվում է նախորդ շահաբաժնի ամսաթվին: Արժեթղթերի արժեքը հաշվարկվում է՝ միջին կշռված ինքնարժեքի հիմունքով:

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

***Ֆինանսական գործիքներ***

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

***Ֆինանսական ակտիվներ***

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝  
ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿՎ),  
բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ),  
գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:  
Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

***«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ.***

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿՎ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻԱՇԿՎ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկվածության ստուգման՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորուստի մոդելի համաձայն՝ պետք է ճանաչվի պարտքային կորուստի գծով պահուստ՝ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, ապա պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով:

***Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը.***

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:

***Ֆինանսական պարտավորություններ***

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով» (ԻԱՇԿՎ) չափվող կամ «ամորտիզացված արժեքով չափվող» ֆինանսական պարտավորություններ:

***Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ***

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները չափվում են՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

***Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում.***

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միննույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

***Հիմնական միջոցներ***

Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:



**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի համար գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում:  
Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա 1-5 տարի  
Տնտեսական և գրասենյակային գույք, այլ հիմնական միջոցներ 5-10 տարի:

***Ձեռք բերված ոչ նյութական ակտիվներ***

Ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով և հետագայում ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Համակարգչային ծրագրեր-10 տարի:

***Շահաբաժիններ***

Շահաբաժինները ճանաչվում են, երբ դրանք դառնում են իրավականորեն վճարման ենթակա:

***Հետաձգված հարկեր***

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական չէ, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/(ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

***Պահուստներ***

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

***ՌեՊՈ պայմանագրով ստացված և տրված արժեթղթեր***

Ընկերությունն ունենում է ֆինանսական ակտիվների վաճառքի և հետգնման պայմանագրեր (ռեպո), ինչպես նաև ֆինանսական ակտիվների գնման և հետվաճառքի պայմանագրեր (հակադարձ ռեպո): Ընկերությունն օգտագործում է հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրերը որպես իր գանձապետական կառավարման տարր: Ռեպո համաձայնագիրը իրենից ներկայացնում է վճարի կամ այլ հատուցման դիմաց ֆինանսական ակտիվի փոխանցում մեկ այլ կողմի և համապատասխան պարտավորություն՝ հետ գնելու այդ ֆինանսական ակտիվն ապագայում փոխանակման համար օգտագործված կանխիկ կամ այլ հատուցման գումարը՝ գումարած տոկոսը: Այս պայմանագրերը հաշվառվում են որպես ֆինանսական գործարքներ: Ֆինանսական ակտիվները, որոնք վաճառվում են հետգնման պայմանագրերով, շարունակում են ներկայացվել ֆինանսական հաշվետվություններում, իսկ այս պայմանագրերի դիմաց ստացված հատուցումը հաշվառվում է որպես ապահովության միջոց հանդիսացող ավանդ՝ բանկերի հետ ավանդային գործիքներում:

Ընկերությունը կնքում է արժեթղթերի հետգնման պայմանագրեր, ըստ որոնց այն ստանում կամ փոխանցում է գրավի առարկան՝ շուկայում ընդունված պրակտիկայի համաձայն: Արժեթղթերի փոխանցումը պայմանագրային կողմերին միայն արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

---

հաշվետվությունում, եթե դրա հետ միասին փոխացվում են նաև սեփականության հետ կապված ռիսկերը և օգուտները: ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրված փոխառությունների ապահովություն:

ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերի դիմաց վճարված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ: Դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում և ներկայացվում այլ գործառնական եկամուտների կազմում: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում՝ իրենց բնույթին համապատասխան: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերի դիմաց ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ: Դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ տոկոսային ծախսերի կազմում:

**«Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ**

**Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ  
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ (շարունակություն)**

**Հավելված Ա. Իրական արժեքի չափման բացահայտումներ**

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված է դասակարգվող իրական արժեքի չափման համար օգտագործված գնահատման մեթոդը, այդ թվում՝ հիմնական ոչ դիտարկելի ելակետային տվյալները, ինչպես նաև ոչ դիտարկելի ելակետային տվյալների և իրական արժեքի միջև փոխհարաբերությունը:

<u>Հոդված</u>	<u>Իրական արժեք, հազար դրամ</u>	<u>Գնահատման մեթոդ</u>	<u>Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ</u>	<u>Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ</u>
Փայեր	273,516	Փայերի իրական արժեքը չափվում է որպես ֆոնդերի գուտ ակտիվների արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ	Մակարդակ 2	Ոչ կիրառելի
Դեբիտորական պարտքեր	2,139	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:	Մակարդակ 3	Չկան այդպիսիք
Կրեդիտորական պարտքեր	719	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:	Մակարդակ 3	Չկան այդպիսիք